

Արձանագրություն N2

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

27.09.2017թ. նիստի

Օրակարգ

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի կազմի փոփոխության հարցը:
2. ԵՊՀ 100-ամյա հոբելյանին նվիրված ֆակուլտետային միջոցառումների նախապատրաստական աշխատանքների քննարկում:
3. Քննարկում նոր մասնագիտական ծրագրերի ներմուծման վերաբերյալ:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 22-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկան Ս. Աբրահամյանը գիտխորհրդին տեղեկացրեց, որ որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Ա. Մուրադյանը և նույն հանձնաժողովի անդամ Շ. Պարոնյանը ծանրաբեռնվածության պատճառով չեն կարող շարունակել իրենց աշխատանքները հանձնաժողովում և խնդրեց նոր թեկնածուներ առաջադրել, որոնք կկարողանան առավել արդյունավետությամբ աշխատել նշված հանձնաժողովում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գիտխորհրդի անդամներն առաջարկեցին նոր թեկնածուների Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովում աշխատելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Որակի ապահովման հանձնաժողովի անդամներ ընտրել Ա. Առաքելյանին, Տ. Սիմյանին, Ա. Ոսկանյանին և Ռ. Առաքելյանին, որոնք լրացուցիչ հանդիպման ընթացքում պետք է ընտրեն որակի ապահովման հանձնաժողովի նախագահին:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկանը նշեց, որ ԵՊՀ 100-ամյա հոբելյանին նվիրված ֆակուլտետային միջոցառումների շարքում նախատեսված են ուսանողների թարգմանությունների ժողովածուի հրատարակումը, հայերեն և օտարալեզու էսսեների մրցույթ՝ «Իմ բուհը» խորագրով, միջազգային գիտաժողովի կազմակերպումը: Նա առաջարկեց քննարկել միջազգային գիտաժողովի թեմատիկ ուղղվածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ելույթ ունեցողները նշեցին, որ քանի որ ուսանողներն ունեն բանավեճի ակումբ, ապա կարելի է ուսխորհրդի հետ համատեղ կազմակերպել բանավեճ-քննարկում: Առաջարկվեց նաև մասնակցել համալսարանական էսսեի մրցույթին և կազմակերպել մշակութային միջոցառումներ: Վերջինիս կազմակերպչական աշխատանքները կարող է ղեկավարել Զ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դեկանատի նիստում քննարկել ԵՊՀ 100-ամյա հոբելյանին նվիրված ֆակուլտետային միջոցառումների նախապատրաստական ընթացքը:

3. ԼՍԵՑԻՆ՝

Խոսելով նոր մասնագիտական ծրագրերի ներմուծման և ֆակուլտետի և ամբիոնների անվանափոխության մասին՝ ելույթ ունեցող Ջ. Հարությունյանը նշեց, որ նախ և առաջ պետք է փոխել ֆակուլտետի անունը: Նա առաջարկեց քննարկել *Եվրոպական լեզուների և մշակույթի ֆակուլտետ* անվանումը: Ջ. Հարությունյանն առաջարկեց նաև փոխել ամբիոնների անունները, ինչպես նաև մասնագիտությունների *լեզու և գրականություն* ձևակերպումը: Բացի այդ, քանի որ ֆրանսիական, գերմանական և ռուսական բանասիրության ամբիոններում ուսանողների քանակը խիստ պակասել է, ապա ռազմավարական ճիշտ մոտեցում կլինի իրականացնել երկլեզու ուսումնառություն, օրինակ՝ անգլերեն-ֆրանսերեն, անգլերեն-գերմաներեն և այլն: Ընդ որում, երկու լեզուներն էլ պետք է ունենան հավասար կարգավիճակ, ինչպես նաև հավասար դասաժամեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Քննարկել վերոնշյալ փոփոխությունները ամբիոններում, նախապատրաստել առաջարկություններ և ներկայացնել դեկանատի նիստում լրացուցիչ քննարկելու համար:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Արտասահմանյան գրականության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արեգա Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար Ա. Առաքելյանի փոխարեն գիտական ղեկավար հաստատել Բ.Գ.Թ., դոց Ա. Մեղրակյանին:
- Տպագրության երաշխավորել Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ, Բ.Գ.Թ. Սիրանուշ Ղալթախյանի «Speed up Your English Language Proficiency (Selection of Audio Reproductions)» ուսումնամեթոդական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Գերմանական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ. Ս. Առաքելյանի «Գերմաներենի բառագիտություն» ուսումնական ձեռնարկը:
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Ռիթա Գասապեանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Մարոյանը և ամերիկյան պատմվածքի ավանդույթները» Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Դ. պրոֆ. Հ. Էդոյանին:
- Երաշխավորել ԵՊՀ Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ, Բ. Գ. Թ. Արմինե Խաչատրյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Երաշխավորել ԵՊՀ Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ, Բ. Գ. Թ. Սիրանուշ Ղալթախյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

27 սեպտեմբերի 2017 թ.